

subito che la colpa è di un nome vicino, che cominciava da Χα, onde lo sviarsi del traduttore o di chi lo trascrive. Errore, e di quelli che si spiegano, è nel *Ճիշտութիւն* (6, 6) che dice a rovescio. L'armeno voltò nella sua lingua il μὴ συμπεσέτω σου τὸ πρόσωπον (6, 9): poi rimutò la frase e, per caso, il *Ճի* restò saldo.

Ma dovrò, o almeno potrò, continuare?

E. TEZA

**աղջկը կորսուեր է աւուրս բառը** (Դմերաց ուժեւուց), **թէպէսև միւս ընթերցուածն պյլ կրնայ կենալ:** իսկ եթէ ընդհակառակին կը պակսի Խաթքեց (Զ, 15 = Հ. 42) անունը, կը տեսնենք իսկան թէ պատճառն է մերձաւոր անուն մի, որ կը սկսէր Խա տառերով, որով սփալեր է թարգմանիչն կամ օրինակողն: **Ախալ է զարձեալ,** բայց այն պիտիներէն է որ կը մեկնարին, մի՛ վատահ յինիցիս (Զ, 6) **թարգմանութիւնն՝ որ հակառակը կ'ըսէ:** Հայն թարգմանեց իւր լեզուով « մի՞ սոմբեսէտա օսու տօ ործաւորն (Զ, 9) բառերը. յետոյ կրկին փոխեց պարբերութիւնը, և պատճամամբ հաստատուն մնաց մի՛ն: — Բայց պարտի՞մ, և կամ զոնէ պիտի կրնա՞մ շարունակել:

b. ՏԵԶԱ

## ՎԱՆԱՅ ԾՈՎԱԿԱՐ

— 3\*3 —



Ա.Յ. աշխարհի ամենէն մեծ աղյին լիճն է սա, որ ըստ այժմեան աշխարհազրական բաժանման կ'նկնայ Բաղիչայ և վանայ զաւառաց մէջ, 175

քիլոմետր Որմիոյ կամ կապուտան ծովալիք Ա.Յ. - Հ. - Ա.Յ. կողմը: իւր ծուրջը պատով այլկայլ զաւառաց և քաղաքաց անուամբ իւր ծագմանէն միշէ ցարդ յորդոր. ջուած է ծովակս: Հնագոյն պատմին մեր խորենացի կ'ըսէ, նախ կոշուեցաւ Ծով Բզնունեաց Մանաւազայ որբոյ բազ նահապետի անուամբ « իսկ որդի նորա թազ յարեմտից հրափայ զեզր Ծովուն աղոյ (ժառանգէ). և զգաւառն և զծավ անուանէ իւրավ անուամբ »<sup>1</sup>: Վերագրեալ խօսքերու մէջ կը տեսնենք որ կը կոշուի նաև Ծով աղի. արիշ տեղ մ'այլ

կը կոչէ Ծովակ աղի, երբ կ'ըսէ Շամբրամայ համար. « Գայ հասանէ... յեզր Ծովակին աղոյ »<sup>2</sup>: Բուզանդ կ'անուանէ Ծով Բաշուռնեաց<sup>3</sup> համանուն զաւափ անուամբ, որ կը պատէր ծովակին արեւ. — Հարաւային ափունքը: Կոյսաւծ է նաև Ծով Վասպուրականի, Ծով Աղրամարայ, Լիճ Արմէշոյ (Arsissa Palus), ըստ Պատրիսիոյ Լիճ Թոռպիտիս (Thospitis Palus), կամ Ծովակ Տուպայ, Տուպ զաւափ անուամբ: իւր այժմեան գործածական անունն է Լիճ կամ Ծովակ Վանայ, համանուն, երբեմ յոյժ հոչակաւոր քաղաքի անուամբ:

թէպէսև Բուզանդ, Վարդան, և Թողմա Մեծօփեցի ծովակս Վասպուրականի կը յաշ-

2. Գիրք Ա. գլ. ծ. 2:

3. Պատրիսիո Գ. գլ. ծ. :

կացընեն, սակայն խորենացին իւր աշխարհագործեան մէջ, կը զնէ Ցուրուբերանի մէջ, գրելով : « Ունի և ծով զիշտունեացն » : Եղովակիս հայկական հին աշխարհազրական սահմանքն են . Ար. Էն Ցուր և Ապրերանի . Ար. Էն Բզնունիք և մասամբ մը Երեւարք . Հ. Էն Բասիլիս, Արճշահովիտ, Խորիսուունիք և մասամբ մը Բզնունիք . Հր. Էն Երեւարք և Շշառունիք :

Խորենացին այս ծափակի իւր ժամանակ ունեցած երկայնութիւնն և լայնութիւնը մեզ կ'աւանդէ ըսելով : « Հարիմ մզոն երկայն և վաթմատն լայն » : Բայց իւր օրերէն մինչև ցարդ, մեծապէս այլափոխուեր է ծալվակիս տարածութիւնն և ձեր, իւր մէջ հասող բազմաթիւ օժանդակաց պատճառու, երբեմն այն ասպիճանի կ'առաւելուն իւր ջարը, որ մինչև անգամ կ'ողողեն շրջակայ զայշաերը : Ասոր ապացոյ է նաև Աղթամարայ կղզոյ հարաւային կողմը կառուցած մեծագործ շինուածոց ջրի տակ ծածկուիլին . նյոյնպէս Արձիշյա բերդը, որ ծովակիս հրամասային կողմը ցամաքի վրայ կառուցուած էր, ողողուելով մեծաւ մասամբ ջրի տակ մնաց, և բաւական տարիներ են, յորմէ հետո ջրի զրութեամբ ցամաքէն զատուելով կղզեակ մը ձեւացաւ : Դարձեալ կառու կղզին, որ առաջ արևելեան կողմէն ցամաքի հետ միացած էր, այժմ զատուած է, երկարազաշափ խորութեամբ բընական ջրանցքով մը : 1870ին Բազմալիպի մէջ հրամարակուած է համառօս տեղեկութիւն մը ծովակիս ջուրց անձնն նկատմամբ, քաղուած Պ. Շարէքը զրուածէն : Այդ տեղեկութեան մէջ կը կարգանց հետեւալը . « Երկրին մէջ աւանդութիւն մը կայ, թէ ատենօր լճին ջուրն հարաւային ափանց վրայ տեսնուած ծակէ մը անդունիդ մը մէջ կը թափի եղեր, թափառական հովիւներ, հետաքրութեամբ կերպով մը կը նցեն ծակը . քանի մը օր ետքը զալով չեն գտներ՝ վասն զի ջուրն ծածկեր է եղեր զայն, և հետըզետ աներ է ու : Ասոր նման որիշ աւանդութիւն մ'ալ, ծովակիս ջուրց նուազելուն համար լսեր է Մեծ. Հ. Ներսէս Սարգսեան . Յունաց վանայ կողմերէն մեկնելէն առաջ, ծովակիս հարաւային եղերը, զադանի

ճանապարհով գետնի տակէն ջուրն հոսելավ կը գնայ կ'ոտովէ եղեր որիշ գտառներ, և այդ պատճառու ջուրը միշտ հաւասարակշիռ կը մնայ եղեր թայց թոնաց մեկնած ժամանակ, անպիտանները շարութեամբ, ըրդոյ մեծամեծ բեռներով կը ցոցեն այդ ճանապահի բերանը, որով ջարը արգիլուելով լճակի մէջ միշտ աներ է ու կ'անի : Իսկ աւելի մանրազնները կը հասատիւն, թէ միշտ ծովակի ջուրը կարգաւ եօթը տարի կ'անի և եօթը տարի կը նուազի :

Դոնարց զա Լեզկ վենետիկցին, 1814ին ծովակիս երկայնութիւնն կը զնէ 100 մղոն և լայնութիւնն 20. այդ լայնութեան չափն, խիստ քիչ կը թուի, եթէ չհամարինց այդ տպազրութեան սիսլ : Այժմ իւր ամենէն ծայրագյուն երկայնութիւնն է Ար. Է Արևմտաց 90 քիլոմետր և լայնութիւնն Հր. Է Հիւսիս 45 քիլմ : Ծովական գործ կ'երկնայ զէպի Ար. - Հ. - Ար. ձեւացնելով կող մը Արժեհոյ Երց, 60 քիլմ : Երկայնութեամբ, այնպէս որ եթէ այս ծոցի արևելեան ափանքէն չափենք, ծովակի երկայնութիւնը, 135 քիլոմետրը կ'անցնի :

Ծովակիս ծալու երեսէն ունեցած բարձրութիւնն ըստ այլայլ չափողաց են հետեւելքն . Տէսուի 1842ին կը զնէ 1629<sup>ր</sup>, Դիլոցն 1666<sup>ր</sup>, Ուեկիւզ 1625<sup>ր</sup>, կիպերտ 1650<sup>ր</sup>, կլյուսոն 1887ին, 1670<sup>ր</sup> :


Իւր մակերեսովիթն է 3690 քառ. քիլոմետր, իսկ խորութիւնն, ըստ վերջին չափողաց, վանին քանի մը քիլոմետր զէպի Արևմտաց երթարով կը հասնի 25 մետրի, և հարաւային կողմերը ունի մինչև 100 մետր խորութիւն, այնպէս որ իւր ջրոյ քանակը ըստ գիտնականաց աւելի շատ է քան Արմիսի ծովակինը :

Իւր ջուրը աստտիկ աղի է և բորակային, ինչպէս կը յայտնէ նաև խորենացին Մարիբուայ խօսերը մէջ բերելով . « Հասանէ (Հայկ) յեզր Ծովակի միոյ՝ որոյ աղի են ջուրըն, մանաւն ունելով ձկունս յինքեան » : Իւր մէջ աղ շատ պարունակիլուն պատճա-

ուսւ, անընկելի է թէ մարդկանց և թէ առաջականութէ բայց իւր հարաւային կողմը, ունի ծովակի տակէն բղասող անուշ և ըմպէլի ջրոյ աղբիւր մը, որոյ պղպջակներն կը տեսնուին մակերևութիւ վրայ ։ Տարուան ամառ եղանակն, երբ անձրեներն կը գաղրին, իւր ափանց բնակիչք, մանաւանդ վանայ մօտ, աւազաներ կազմելով կը լեցընեն ծովակի ջրով, և երկու շաբաթէն ջրոյն գոլորդիանալով, աւազաների յատակը կը մնայ, զրեթէ շրոս մատ թանձրութեամբ, սպիտակ և պատուական բորակ, զոր կը վաճառեն և ըստ բաւականի կը շահին, Դարձեալ ծովակիս ջուրը ունի զգեստուց կեղտերը մաքրելու զար-

մանակի զօրութիւն մը, և օճախի պէս կը փրփրի. բայց իւր մէջ ո՞ր և է լաթեթէն լուսանակէ լերջ, հարկ է անուշ ջրով անդամ մ'այլ ցայել, ապա թէ ոչ կը փաեցրնէ : Վերջին մամանակներս, այժմ յԱմերիկա բնակող, և ի Հայս ճանապարհորդող գաղղիացի մը, հետաքրքրութելով այր ջրոյն գորմանալի յատիւթեամբք, հետո քանի մը շիշ նոյն ջրէն կը բերէ յԵրոպա և Ստրազբուրգի համալասարանի գիտնական ուսուցիչ Սերգոյի ձեռքով, առնելով 40, 000 մասնիկ այդ ջրոյն ի կշիռ, և տարրալուծուելով ստոցտէ է հետուեալ համեմատութիւնն.

Եղովակիս մի միայն ձուկն ընտիր՝ է բա-



Ծառակ

$\text{Ե}(\mathcal{Q}\beta\text{n}\theta^3)^2$	Բնածիսատ երկաթոյ .	0 , 0488
$\text{Մ}(\mathcal{Q}\beta\text{n}\theta^3)^2$	Բնածիսատ մագնանի .	0 , 0360
$\text{Մ}(\mathcal{Q}\beta\text{n}\theta^3)^2$	Բնածիսատ մագնէսի .	5 , 7308
$\text{Կ}(\mathcal{Q}\beta\text{n}\theta^3)^2$	Բնածիսատ կրածնի .	0 , 4692
$\text{Ն}(\mathcal{Q}\beta\text{n}\theta^3)$	Բնածիսատ օշնանի .	74 , 4426
$\text{Մ}(\mathcal{Q}\theta^4)$	Ծծմբատ ստրոնի .	0 , 0111
$\text{Կ}(\mathcal{Q}\theta^4)$	Ծծմբատ կրածնի .	0 , 5928
$\text{Կ}(\mathcal{Q}\theta^4)$	Ծծմբատ կալիոնի .	9 , 7655
$\text{Ն}(\mathcal{Q}\theta^4)$	Ծծմբատ օշնանի .	26 , 6527
$\text{Բ}(\mathcal{Q}^4\theta)$	Քլորոկ աւշակածնի .	0 , 1699
$\text{Ն}(\mathcal{Q})$	Քլորոկ նատրոնի .	95 , 8835
$\text{Կ}(\mathcal{Q}^2(\mathcal{L}\theta^4))^2$	Լուսածնատ կրածնի .	0 , 0349
$\text{Գ}(\mathcal{Q})\theta^2$	Գայլիսազական թթոււտ .	0 , 7284
$\text{Պ}(\mathcal{Q})\theta^3$	Պաղլեղածին .	0 , 0347

244 , 0979

սեխն, համանման եւրոպեան հարինդի, որ ունի զրեթէ 20 հարիւրորգամետր երկայնութիւն, որ Մարտէն մինչև Մայիսի սկիզբը խիստ առատ կը գտնուի, և բազմութեամբ կը զիմեն դէպ ի զետերը և առաւակները, մանաւանդ Մարմէտու զետը :

Այս եղանակին ձկնորսք առաւառթեամբ կ'օրսան, կ'աղեն ու կը լորցընեն, և բեռքեռ տանելով այլ և այլ գաւառներ և մինչև Պարսկաստան կը վաճառեն և մեծապէս կը շահին : Տառեխը զբեթէ առաւան մէջ 50, 000էն 60, 000 դահնեկան շահ կը բերէ :

Նոր ճանապարհորդ մը կ'ըսէ և Տարոյ

միևս եղանակները սառեխները ո՞ր կը բրնակին : Տեղացիք և անոնցմէ լուղ ճանապարհորդը, միշտ պատասխան կու տան թէ ծովակի յատակը : Ըստ իս շատ զժուարին է, որ կարենայ ձուկ մը ապրիլ վանայ ծովակի պէս աղի ջրոյ մէջ ։ Ես աւելի կ'ենթալրեմ, որ իւր մէջ վազող վասկաց, աղի ջրէն անխառն մասցող հոսանաց մէջ կ'ապրին : Այս նոր ճանապարհորդի կարծեաց առանց հակառակելու, զնենք նաև այն կարծիքն, թէ առուեխներն իրենց ձուերը կը ձգեն գետոց և վասկաց ջուրց մէջ և հնի կ'ամին ապրւոյ միւս եղանակներու մէջ, և

զարնան սկիզբը, երբ լեռանց ձիւները կը հային և գետակաց ջորը կ'առատանան, այն ժամանակ ջրոյն սասակի հոսանաց արագութեան և բռնութեան շկարպանալով զէմ դնել, բազմութեամբ կը մղուին գէպ ի ծովակը, և ձկնորսը գետաքիրաները զնելով իրենց արուեստական հիւստած կրկնայարկ սապատները, կ'որսան առատութեամբ։ Ուրիշ գիտական տղեւոր մ'ալ կ'ըսէ։ « Ծովակը հրաբրիսային ժագումն ունենալուն պատճառաւ, հարկ է որ իւր յատակը ունենայ զանազան խոր խոռոչներ, և անսուրաքայս տառեիները կ'ապաւինին այլպիսի խոռոչից մէջ, և անկատար ձկնորսական դորիքն այդ կողմի քնակաց անկարող կը լինին զայնս որուալու։ Փիլիպսոս կարմելեան կրօնաւորը, որ 1840 ին Փարասոսի 12 Հն 16, սասակի հողմ՝ լինելուն պատճառաւ շար օրուան մէջ նաւեց վանին դրառուան, կը կարծէ որ ծովակի, սոտերինեայ հագործութիւն աւնենայ կառայից ծովու հետև և կը համարի որ սա, ծագումն առած է կառավից ծովին։

Պատմիչքն մեր Վարդան և Մասմէսոս գրեթէ իրարու նման աղիստալի արկած մը կը պատմեն ծովակիս վրայ։ Վարդանայ խօսքերը ի մէջ բերենք ու պիտի տեսնենք որ ձեռն ժամանակ ևս ծովակը կ'ունենայ եղեր տառեիներ։ Հայոց Ենթ թռւականին (1410) « ի ժամանակս ձմերանի ՚ի մմին գիւերի անկառ հուր ի բարձանց ի ծովի վասպուրականի, և գոյեալ ծովաւն անկառ զցամաքան, և զարձաւ ծովի ի զոյն արեան և մեռան ձկունքն, և ի լուսանալ առաւօսաւն կուտեալ կային առ ցամաքաւն իրեւ զփայտակյոտ անսուռաց »։ Մատթէսոս քիչ մը աւելի տեղեկութիւններ այ կ'ուստայ, կ'ըսէ որ ցամաքն ալ սաստիկ կերպավ շարեցաւ, և երկրորդ օրը ձկները սկսան հոսիլ։ Ալսպիսի շարեերու ենթակայ եղած է շատ անդամներ ծովակս և շրջակայ վայրերը, զի իւր մերձակայ Սիփիան և Ներսութթայ լեռներն հրաբրիսային կազմուածք ունին, որը այժմ կը համարուին շշենալը։ Զմեռը շատ անգամ կը ստուի լիմ կորոյ մօտերը, ուր ծանծաղ են ջարը, բայց ամբազդ ծովակի ստուիը երբէք չէ լուսած։ Միայն Մամուէլ կը լիւէ ձի՞ջ (697) թռւին, ասոր

սառիլը բաելով։ « Կարաձմեռն, յորում թըզնունեաց ծովն սառեւաւ »։ Սակայն Սամուէլի այս խօսքերէն ալ չենք իմանար որոշ կերպով, թէ արփեք ամբո՞ղջ ծովակը սառեր է, թէ լիկ ծանծաղ տեղերը։

Եղովակս ունի Աղթամարը, Առատէր, կտուց և Լիմ կղզիները և Արձէց բերդի կղզեակը էր։ Այս կղզիներու աշխարհագրական և պատմական նկարագրովինցն, մանաւանդ երբեմն հոչակատորին Աղթամարայ՝ յօդուածովն նապատակ ունենալով միայն ծովակի, ըստ ամենայնի կատարեալ նկարագիրն յօրինել, զանց կ'ընեմը աստ, որոց նկարագիրը կարելի է որիշ առթով « կղզիի ծովակին վանայ » վերնագրով յօդուածով մը հրասարակել։

Այժմ աեսնենց թէ Եղովակիս վրայ ո՛րշափ նաւեր կը զանուին, Եւ բորէ կը զրէ թէ 1806ին հազիւ եօթը ութ առագաստանաւեր կը զանուին եղեր, Բաղէշ քաղաքի վաճառականութեան համար։ Դրառուս սկզբէն մինչեւ ցայժմ տարուէ տարի երթալով բազմացած են առագաստանաւը, և ըստ վերջին հաշուողաց կան 87 առագաստանաւը, որը ունին 347 նաւաստիք և 4040 տակառաչափ բեռն կը փոխազբէն։ Մեծ նաւեր խիստ քիշ կը զանուին։ 1879ին վանայ ամերիկան քարոզիչք տառաջին անդամ ձգեցին շովենաւակ մը, որուն մասնենց ուղտերով բերել տուած են։ ծխախոսի ընկերութիւնն ևս ունի փոքր շոգենաւա մը։ 1887ին պետութիւնն ծովակիս մէջ շոգենաւուց նաւարկութեան շահաւետ լինելը դիմելով, որոշեց որ կանոնաւոր զագենաւուց նաւարկութիւնն մը հաստատաի, որուն զործագրութիւնը ինչուան հիմա շինելով, անշուշտ ապագային մէջ պիտի կատարուի։

Գիլխաւոր նաւահանգիստն է Ալանց գիւղի նաւահանգիստը, Վանայ մօտ զէպ ի հիւսիս, զոր թուրքը իսկէկ-քեօյիւ կը կոչեն։ Աւք նաւերու բազմութիւնն մը միշտ կը բերեն վան քաղաքի համար այլ և այլ վաճառքներ, հաս է նաև ծալվակի նաւարկունը։ Նաւահանգիստներ ունին զիթթէ ծովակի ափանց վրայ գանուող ամենայն քաղաքը և աւանց, ինչպէս Արծէկ, Խալաթ, Դրառուան, և այլն։

Անձրեներու ժամանակ հեղեղատաց և առուակաց բազմութիւն մը կը թափին ծովակս, ինչպէս Հ.-Ամ. կողմէն խլամայ մօտէն կը թափի Նազուկ լճէն սկիզբն առած առուակ մը : Ասոր նման ուրիշ առուակինք քատ իւր չորս կողմէն կ'ընդունի այլ և այլ գետափներ որոց ուսանց անուանն յիշենք . Մարմէտ, Ռատան, Թռուխ, Պէտումայի կամ Բերկիրի, Հայտէրպէյ, Արճէշ, Մսկաց, Խլաթ, Խոշապ, Հորգոմ կամ Անզգայ գետ և այլն :

Հին ժամանակիները Վանայ ծովակը կը կոչուէր ծով Նայիրի որ Հիւսիսէն շրջապատուած էր Ալրարգուէն<sup>1</sup> և Հր. Էն և Ար. Էն Բիածիաէն<sup>2</sup>, որք էին երկու թագառութիւններ, յորոց վերջինը նուանուեցաւ առաջինէն : Այլ էին ժամանակիները պատահած գեր ուրիշ շատ զանազան յիշառակաց արժանի զէպքեր կան ինչպէս վանայ, նոյն պէս և իւր ծովակի նկամամբ, որք մինչև ցարդ մեծա մասամբ մեզ անծանօթ են մնացած, և թերեւս օր մի զիանականաց և հնաշխուզից արգեամբ կարենան պարզուիլ, կարզալով տոսպեան բեւեռաձեւ արձանագրութեանց այն տախտակիները, զորս մինչեւ ցարդ ընթեռնուլը անհնարին է եղած :

Ծովակս ունի նաև իւր առասպելախառն վէպերը, յորոց մին համառօտին յիշեմբ : Վանայ միջնաբերզը ցոյց կու տան մի ծակ և կ'րսեն թէ այլ ծակը մի ճանապահի բերան է, որ կ'երթայ շատ խոր, մինչեւ ծովու յատակը, ուր կայ բիրեղեայ հիանալի ապարանք, ուր փերիներ կը վայելեն յաւերժական երջանկութիւն, և այլն : Բայց այդ ապարանքի ոսկի զուռը կախարգուած է և չի բացուիր ամենուն վիմաց, և այլն :

Հայ ծերունի նահասեաններէն մին, ուսգելով ազատել իւր աշխարհի երիտասարպները, հշտասէր Շամիրամայ մղութիւններէն, անզամ մը թագունույն լուղացած ատեն, կը յափշտակէ նորա կախարդական ուլունքները և վագելով Դատուանի ծովերբը, ծովը կը

նետէ . ի զուր հերարձակ կը վազէ թագուհին ծերունոյ ետևէն և իւր վարսից պարասակի պաշտօն աւալով կը նետէ ժայռի մը կտոր, որ կ'ինինայ Արամետու մօտ : Արտամետցիք այդ աանկութիւնը պահած են իրենց մէջ մինչեւ ցայժմ, և երգ այլ շարաբներ են ի հուսմն, որոյ բառերէն են անշուշտ խորեւնացոյ յիշած երեք բառերն : « Ուզունիք Շամիրամայ ի ծովը » :


Այսմ հարկ է, յարգոյ Ընթերցող, ծուվակիս վրայ այսափ տեղեկութիւններ լսելէ վերջ, իւր բանաստեղծական տեսարանն և վայելելէ : Մայիսի առաւատ մը, եթէ ոչ ուտիք գէթ մտօք անցնելով Ռստանայ ծառազարդ ճանապահներէն, զիմենիք գէպէ ի արեւելեան հարաւ, և բարձրանալով Արտօս լիւրան մի զալարազարդ ծովահայեաց բարձրաւանդակի վրայ կանգ առնունք, և ինչ կը տեսնելով Վարդակայսիր արեգակը իւր ոսկեծեղուն ապարանքներէն գետ նոր է զուր երեր, նորա ճանապայթները մօսենալով զաշտերս երիներանգ ծաղկանց և փափուկ խոսացոյց իջած ցօղերու, մեզ ցոյց կու տան իրենց բոլոր ցոյները, և ցօղերը ցոլուսոյ կը վերածեն, որ կամաց կամաց բարձրանալով օդոյ մէջ, և մեղմիկ զեփիւռէ մղուելով, կու գան առ կախ կը մնան նուրբ քողի պէս, մանխակազայն հայելույ նման ընդարձակ զեղեցիկաձեւ աւազանի մը վրայ, որ բոլորած է հիանալի յրջանակով մը Սիփան, Գրգուռ, Ներբայթ և այլ լերանց ալէնեւ բարձրութիւններով :

Այդ հայելին, որ է ծովակն, իւր մէջ կը ցուցընէ մի քանի սև սև կետեր, զոքա իւր կղիներն են, յորոց ամենէն աւելի պայծառ և զեղեցիկ կ'երկի, մեզ մերձաւորազոյնն, որ իւր կաթողիկէին կը յայսնէ, թէ ինքն է Աղթամարը, հոչակաւոր՝ ճարտարարուեսա և զեղեցիկացնակակ Ս. Խաչ եկեղեցեան : Նորբ քողի միջէն կը տեսնուի վան, իւր անմատչելի, ապասածուա միջնաբերզով և երկիւրդ պարիսպներով . նորա մօտ Աւանց գիւղի նաւահանգիսար, դիտակի միջնորդութեամբ, կը տեսնուի գրծօն վրից մէջ, զի բազմութիւն մը նաւուց, նաւաստեաց և բեռնակրաց շարժման մէջ են : Անմիջապէս մեզմէ

1. Արարատեան թագաւորութիւն :

2. Բիածիա կամ Ախանիս կը կուտէր Վանաց թագաւորութեան յատուկ երկիրն :

քիշ հեռու, Աստանայ և մեր մէջտեղ կը տեսնուի անշաք մենաստանն Զաղար Սուրբ Նշան, յորում հանգչին ուսկերք Վարդանայ դպրին, աղու Եղիշէին, զեռ անդին, զէպ ի ծովակի արևելակողմը բազմաթիւ ծովեղեր բեայ զիւղերէ զատ, յորս է զեղեցկաղիր Արտամէտ աւանը, կը աեսնուին շէն և ամենի վանքեր, ինչպէս Սպիտակ վանք, Աստու-



Տեսաբանեց գովայի հայոց ժողովութեան պատկեր

ծածնի վանք՝ | Անզ զետոյ վրայ, կոնկու վանք, վանէն զեռ աւելի զէպ ի Արևելք հակայաձեւ կը բարձրանայ վարագ լեռը, իւր

բագ մենաստանները, իւր արևմտեան կողսր փոսի մէջ կ'ինինայ Սարնապատու կամ Ս. Գրիգոր վանքը, ասղին կարմրուր Աստուծածին, զեռ առաջ ծովեղերքը Մարմէտ

գետի մօտ, առառեխ ձկան որսորդութեամբ նշանաւոր Մարմէս զիւղը, զէպ ի Հարաւ Անանավանք, Ամիւր զիւղ և վանք, Ամիւկ, Նորչէն, և այլն: Ծովակի հրասաւյին կողմը, նուրբ քողի միջէն կը նշմարուի, մի ահազին բարձրութիւն, զա է այս կողմերը իւր բարձրութեամբ հաշակաւոր Սիփան կամ ըստ հնոց Մասեաց (Masius) լեռը, որ իւր ալեքպար սպիտակահեր զլոխը յամս ծրարած է: Այս եղերաց վրայ է նաև հին Արճէշը, որոյ բերգ, ինչպէս ըսինք, յոյս բանութեամբ կղզիացեր է, և մեծաւ մասամբ ջրասուզելով, ցոյց կու տայ միայն իւր պատնշաց մնացորդը, հին Արճիշոյ մօտ կ'ինկնայ Ականց զիւղն, որ կը համարուի Նոր Արճէշ՝ թէպէտե այս ամենին այլ չեն տեսնուիր նոյն իսկ զիսակի միջնորդութեամբ, սակայն իմ նպատակս լինելով, ծովակի գեղեցիկ հրապանչ տեսարանները ցուցուցած ժամանակս, ծանօթացնել, քեզ յարցի ընթերցող, նաև իւր շուրջը զանուող նշանաւոր վայրերին, այդ պատճառաւ զանց շեմ ըներ, յիշել, ինչ որ յիշելու արժանի է: Այս ուղղութեան վրայ են նաև Ասուզալինքը, Գարսացէշը և Անջրա զիւղերը, Աւեր վանքը, հնութեամբ և յիշատակօք նշանաւորքն Արճէշ և Խլաթ:

Ծովակի արևմտակաղմը Բնունեաց զաւասի մէջ են Ներոյիթ, Գրգուս, Կիւզէլ Տէրէ Լեռները, Շամիրամայ բերցի աւերակները, Դատավանը, Աստուածանի վանքը, Աղաղայ Եկեղեցին, և մի քանի զիւղեր: Խակ Հարաւային կողմը, բաց ի Արտսասարի ալիքաւոր ելեէնիքէն, որ կերկնայ մինչ իյի զիւղը, կայ նաև Ընձարիսար կամ կապուտիզ լեռը, որ հրուանզանաձե երկնցած է Ծովակի մէջ: Այս կողմն են Նարեկ, Ա. Սահակ, Կարմակ, Ա. Թողմաս, Ա. Գէորգ, Ա. Յիզակիրուզի վանքերը և

Նարեկացոյն Քարայրը, Վանըք, Առոփ, Վառենց, Նորգեղ, Բատականց և այլ զիւղերը: Ոստանէն ոչ այնափ հեռու ծովի զերը կ'ինկնայ Քարապաշտ կամ Մանակերտ աւանը, և զեր առաջ զէպ ի ծովը երկնցած բարձրութեան մը վրայ, կը տեսնուին մացորդը ամրոցին Մանաձինքի, ուսկից Մանաձինքի Ռշառունին ի ծով գահալիքեց Ա. Յակոբայ սարկաւազները: Այս ափանց վրայ է նաև Նոր Մոխրաբերդ զիւղը, որ կառուցուած է, ի յիշատակ հնոյն, զի զինն ծովը իւր մէջ առած է, ուսկից երբեմն (Ե. Դար) Ա. Սահակ Ռշառունեանց եպիսկոպոսը, Պարսից աարուաններն կործանելով՝ ծովը հոսեց հուրն ու մոխիր, և այդ պատճառով կոշուեցա Մոխրաբերդ:

Ցուրնջեան ոսկի զնդոյն արևելեան երկնից կապուտակի վրայ բարձրանալովն կը փարաւասի, կ'անհետանայ, քիչ առաջ մանիշակացոյն հայելոյն վրայ կախուած նուրբ քոյն, այժմ աւելի պայծառ կ'երեխն տեսարանը, բայց ոչ առաջնոյն պէս զեղեցկասեսիլ և հրապարիչ: Այլ շատ շապագենք, յարգոյ Ընթերցող, այս աեղ, մեր աշաց տղն բացուելով, և ի սիրաս և ի միտո թափանցելով այս ամենայն հրաշալիք, կը յուգեն զմեզ իրենց հին ու նոր, ուրախ և տիտոյ յիշատակները ի մեջ զարթուցանելով:

Ակամայ, արգելէներէ սակապուտած, ոչ ինչ շկարողանալով յիշատակիլ, թէ յանցելումն և թէ՛ ի ներկայի, այս ծովակի շուրջը և վրայ կասարուած գէպքերու վրայ, կը վերջացնեմ զրութիւնս. բաւական համարելով Ընթերցողին, որ իչնէ Արտսոի բարձրաւանակէն և մանելով մերձակայ Զարգար Ա. Նշան մենասանը, նոտի Ա. Եղիշէի անշոք շիրմին մօտ և խորհրդածէ իւր աշխարհի անցեալն ու . . . . .

Հ. Սուքիս Էփրիկեան

